

**Դատական գործ N: ԵԿԴ/0022/01/09**

<b>Երբ է գործը ստացվել:</b>	06-03-2009		
<b>Քրեական գործի համարը:</b>	0022/01/09		
<b>Ինչ կարգով է գործը ստացվել:</b>	Առաջին անգամ		
<b>Գործը որտեղից է ստացվել:</b>			
<b>Դատախազություն:</b>	<< Գլխավոր դատախազություն		
<b>Նախաքննական գործի համարը:</b>	58210208		
<b>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</b>	Այն բանի համար, որ հանդիսանալով կահույքի արտադրությամբ և ներկրմամբ, դրա մեծածախ և մանրածախ վաճառքով զբաղվող Սկավա ՍՊԸ տնօրեն, քննությամբ չպարզված անձից ձեռք է բերել ԱՄՆ-ում գործող բանկային քարտերի կեղծ կրկօրինակներ և հափշտակել այդ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը		
<b>Մեղադրյալ Անձ</b>			
	Անուն	Վարդան	
	Ազգանուն	Ավետիսյան	
	Հայրանուն	Տիգրանի	
	Հասցե	Արաբկիրի 51 փող. 3շ. բն. 4	
<b>Հոդված_1</b>			
	Հոդված	177	Մաս 3 Կետ 1
<b>Հոդված_1</b>			
	Հոդված	190	Մաս 3 Կետ 1
<b>Դատվածություն:</b>			
<b>Պաշտպան</b>			
	Անուն		
	Ազգանուն		
	Հասցե		
<b>Վիճակագրական տողի համարը:</b>	6.3		
<b>Իրեղեն ապացույց</b>			
<b>Իրեղեն ապացույցի անվանումը:</b>			
<b>Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:</b>			
<b>Խափանման միջոց:</b>	Ստորագրություն չհեռանալու մասին		
	<b>Երբ:</b>	06-03-2009	
<b>Նախագահող դատավոր</b>			
	Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ	
	Դատավորի անուն:	Ժորա Սարգսի Վարդանյան	
<b>Դատավոր</b>			
	Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ	
	Դատավորի անուն:		

<b>Երբ:</b>	11-03-2009
<b>Որոշումը ուղարկվել է կողմերին:</b>	11-03-2009
<b>Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:</b>	11-03-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Երբ:</b>	27-03-2009
<b>Երբ:</b>	02-04-2009
<b>Դատավարության կողմեր:</b>	Պաշտպան
<b>Դատավարության կողմեր:</b>	Տուժող
<b>Դատավարության կողմեր</b>	
Անուն	Արման
Ազգանուն	Մնացականյան
Հասցե	Նորքի փ. 52
<b>Դատավարության կողմեր</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Դարիբյան
Հասցե	Նորքի փ. 52
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	14:30
<b>Ամսաթիվ:</b>	02-04-2009
<b>Ամսաթիվ:</b>	02-04-2009
<b>Հոդված</b>	
Հոդված	177 Մաս 3 Կետ 1
<b>Հոդված</b>	
Հոդված	190 Մաս 3 Կետ 1
<b>Այլ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	02-04-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատական ակտի բովանդակությունը:</b>	<p>Գործ ԵԿԴ/0022/01/09թ.  ԴԱՏԱՎՃԻՈՒ  ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով .</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ժորա Վարդանյան  ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ Էմմա Ավետիսյանի  մասնակցությամբ</p>

ՄԵՂԱԴՐՈՂ ՀՀ Գլխավոր դատախազության դատախազ  
Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
ՊԱՇՏՊԱՆ՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ

ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

դռնբաց դատական նիստում, 2009թ. ապրիլի 2-ին, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի.  
Վարդան Տիգրանի Ավետիսյանի.  
ծնված 05.05.1970թ., Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին երեք անչափահաս երեխա, չի աշխատում, նախկինում չհատված, հաշվառված՝ ք. Երևան, Փափազյան փողոց 25 շենք 52 բն., բնակվող՝ ք. Երևան, Արաբկիրի 51-րդ փողոց 3 շենք, բն. 4:

Խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Քրեական գործը հարուցվել է 04.11.2008թ. ԱԱԾ քննչական վարչությունում:

Առաջադրված մեղադրանքի բովանդակությունը.  
Ամբաստանյալ Վարդան Ավետիսյանը հանդիսանալով «Սկավա» ՍՊԸ տնօրեն, քննությամբ դեռևս չպարզված անձից ձեռք է բերել ԱՄՆ-ում գործող «MBNA AMERICA BANC» կազմակերպության կողմից բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և սեփական ձեռնարկության վաճառասրահում տեղադրված բանկային քարտերի ապաստարկման POS-տերմինալի միջոցով նշված բանկի հաճախորդների հաշվեհամարներից գաղտնի հափշտակել է ընդհանուր առմամբ 42,269,000 դրամ առանձնապես խոշոր չափի գումար:

Բացի այդ, ամբ. Վարդան Ավետիսյանը հիշյալ գողացված գումարները «Սկավա» ՍՊԸ հաշվեհամարին փոխանցելով և տնօրինելով, գումարի իրական բնույթը և ծագման աղբյուրը խեղաթյուրելու եղանակով հանցավոր ճանապարհով օրինականացրել է ստացված եկամուտը:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 04.03.2009թ.:

Ապացույցների հետազոտում և գնահատում:

դատարանի կողմից հաստատված փաստերը.

Ամբաստանյալ Վարդան Ավետիսյանը հանդիսանալով կահույքի արտադրությամբ ու ներկմամբ, դրա մեծածախ և մանրածախ վաճառքով զբաղվող «Սկավա» ՍՊԸ տնօրեն, քննությամբ դեռևս չպարզված անձից ձեռք է բերել ԱՄՆ-ում գործող «MBNA AMERICA BANC» կազմակերպության կողմից ապաստարկվող 5490999252282420, 5490992684007739, 5490990102804562 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և սեփական ձեռնարկության վաճառասրահում տեղադրված բանկային քարտերի ապաստարկման POS- տերմինալի միջոցով ձեռնամուխ է եղել վերոհիշյալ բանկի հաճախորդների հաշվեհամարներից ընդհանուր առմամբ 42,269,000 դրամ առանձնապես խոշոր չափերի գումարներ գողանալուն և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն օրինականացնելուն, ինչը դրսևորվել է գողացված գումարները «Սկավա» ՍՊԸ հաշվեհամարին փոխանցելով և տնօրինելով, գումարի իրական բնույթը և ծագման աղբյուրը խեղաթյուրելու եղանակով:

Այսպես, նա 2008 թվականի սեպտեմբերի 18-ին «Սկավա» ՍՊԸ վաճառասրահում տեղադրված POS-տերմինալից ԱՄՆ «MBNA AMERICA BANC» բանկի կողմից ապաստարկվող 5490999252282420 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով 9252282420 հաշվեհամարից 12.367.000 դրամը փոխանցել է «Ինեկո բանկ» ՓԲԸ-ում բացված «Սկավա» ՍՊԸ հաշվեհամարին, գողացված գումարը հաշվապահությունում 19.09.2008թ. պայմանագրով

ձևակերպել է իբր սեփական միջոցներից ձեռնարկությանը տրամադրած փոխառություն, դրանով իսկ օրինականացնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը, խեղաթյուրելով գումարի իրական բնույթը ու ծագման աղբյուրը: Այնուհետև կատարելով փոխանցումներ՝ տնօրինել է այդ գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 13-ին «Սկավա» ՍՊԸ վաճառատարահում տեղադրված POS-տերմինալից ԱՄՆ «MBNA AMERICA BANC» բանկի կողմից սպասարկվող 5490992684007739 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով 2684007739 հաշվեհամարից 14.780.000 դրամը փոխանցել է «Ինեկո բանկ» ՓԲԸ-ում բացված «Սկավա» ՍՊԸ-ի հաշվեհամարին, գողացված գումարը հաշվապահությունում 15.10.2008թ. պայմանագրով ձևակերպել է իբրև սեփական միջոցներից ձեռնարկությանը տրամադրած փոխառության, դրանով իսկ օրինականացնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը, խեղաթյուրելով գումարի իրական բնույթը ու ծագման աղբյուրը: Այնուհետև տնօրինել է այդ գումարը, կատարել է ընդհանուր առմամբ 3.977.580 դրամի փոխանցումներ, իսկ 10.500.000 ՀՀ դրամը կանխիկացվել է, որից 10.000.000 ՀՀ դրամը տրվել է իրեն, ինչը հաշվապահությունում ձևակերպվել է որպես փոխառության մարում:

Ամբ. Վարդան Ավետիսյանը 2008 թվականի նոյեմբերի 2-ին, «Սկավա» ՍՊԸ-ի վաճառատարահում տեղադրված POS-տերմինալից ԱՄՆ «MBNA AMERICA BANC» բանկի կողմից սպասարկվող 5490990102804562 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով 0102804562 հաշվեհամարից 15.122.000 դրամը փոխանցել է «Ինեկո բանկ» ՓԲԸ-ում բացված «Սկավա» ՍՊԸ հաշվեհամարին, գողացված գումարը ձևակերպելով իբրև նույն օրը ԱՄՆ քաղաքացի Ջեֆրի Պարկերին վաճառված կահույքի դիմաց վճարում, այդ անապրանք գործարքով խեղաթյուրելով գումարի իրական բնույթը, ծագման աղբյուրը և օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը:

ՀՀ ԱԱԾ վարչական շենքում նշված գործարքի վերաբերյալ բացատրություն տալուց Վարդան Ավետիսյանը նշել է, որ 2008 թվականի նոյեմբերի 2-ին «Սկավա» ՍՊԸ վաճառատարահից մի արտասահմանցի հաճախորդ կահույքի դիմաց վճարումը կատարել է բանկային քարտով: Ինքը սկզբից համեմատել է հաճախորդի անձնագրի և բանկային քարտի վրա առկա ստորագրությունները և որպես դրա ապացույց քննությանը ներկայացրել է իբրև հաճախորդի ԱՄՆ քաղաքացու անձնագրից և բանկային քարտից իր կողմից հանված պատճենները:

Նշված արարքները կատարելու համար Վարդան Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները.

Ամբաստանյալի կատարած հանցանքը հիմնավորվեց գործով ձեռք բերված ու հետազոտված հետևյալ ապացույցներով.

-ամբ. Վարդան Ավետիսյանի ինքնախոստովանական ցուցմունքներով.

Ըստ մեղսագրվող հանցանքի էության, ամբ. Վարդան Ավետիսյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2008թ. գործուղումից Հայաստան վերադառնալուց, Իտալիայում ծանոթացել է ոմն Հովիկ անունով ազգությամբ հայ մի երիտասարդի հետ, որը գումար չունենալու պատճառով չի կարողացել նավի տոմս գնել, նրան օգնելու նպատակով տվել է 600 եվրո:

Որոշ ժամանակ անց Երևանում իր վաճառատարահում հանդիպել են նույն Հովիկի հետ ու նա վերադարձրել է պարտքը: Մտերմացել են և Հովիկն առաջարկել է օժանդակել իր բիզնեսի իրականացմանը՝ հաճախորդներ գտնելու եղանակով: Հերթական գործարքի ժամանակ նա հայտնել է, որ հաճախորդներից մեկը ցանկանում է վճարել կրեդիտ քարտով: Սակայն որոշ ժամանակ անց Հովիկն

ասել է, որ նախահաշիվներում և ծրագրերում սխալներ են թույլ տրվել և գործարքը չի կարող կատարվել ու խնդրել է գումարը վերադարձնել, ինքն էլ չի մերժել և վերջինիս խնդրանքով տվել է նաև POS-տերմինալի կտրոնը, որի տվյալները չի գննել՝ վստահելով Հովիկին: Հաջորդ օրը հասկանալով, որ վաճառք տեղի չի ունեցել, սակայն ֆիքսվել է դրամային շարժ, որոշել է այն հաշվապահորեն ձևակերպել՝ իբրև փոխառություն իր անունից «Սկավա» ՍՊ ընկերությանը, որի հաշվեհամարից բանկային փոխանցումներ է կատարել գործընկերներին և հարկային մարմիններին: Թե ում բանկային քարտով է Հովիկը գործարքներ իրականացրել, տեղյակ չի եղել:

Հարցերին պատասխանելիս ընդունեց, որ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գումարներ, որոնք «Սկավա» ՍՊԸ-ի հաշվեհամարին փոխանցելով և տնօրինելով, դրանց իրական բնույթը և ծագման աղբյուրը խեղաթյուրելու եղանակով հանցավոր ճանապարհով օրինականացրել է ստացված եկամուտը:

Զոջաց կատարածի համար, դատարանից խնդրեց մեղմ պատիժ նշանակել իր նկատմամբ:

- Գործով տուժող «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արման Աշոտի Մնացականյանի դատարանում տված ցուցմունքով այն մասին, որ «Սկավա» ՍՊԸ վաճառատարահայն տեղադրված և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող POS-տերմինալի միջոցով 2008 թվականի սեպտեմբերի 18-ի, հոկտեմբերի 13-ի և նոյեմբերի 2-ի գործարքները կատարվել են բանկային քարտերի կեղծ կրկնօրինակով: Հիշյալ գործարքների արդյունքում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը հասցրած հնարավոր վնասը կարող է կազմել 42.269.000 դրամի չափով:

Քարտերը թողարկող և սպասարկող ամերիկյան բանկի կողմից «Մաստեր Քարդ» վճարային համակարգի միջոցով «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին նախաքննության ընթացքում ներկայացվել է հետզանձումային պահանջ 3.000.000 ՀՀ դրամի չափով, այդ գումարի չափով էլ ներկայացվել էր քաղաքացիական հայցի պահանջ:

Տուժողի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում հստակեցրեց պահանջը և հայտնեց, որ դատաքննության ընթացքում կատարված հարցման պատասխանից պարզվել է, որ փաստացի կրած վնասը կազմել է 1.000.000 ՀՀ դրամ, ուստի ներկայացրեց քաղաքացիական հայցի պահանջ այդ գումարի չափով:

Պատճառաբանելով, որ միջնորդությունը ներկայացնելու պահին Բանկի կողմից փաստացի կրած վնասը կազմում է 1.000.000 ՀՀ դրամ, իսկ հնարավոր վնասը կարող է կազմել 41.269.000 ՀՀ դրամ՝ 02.11.2008թ.-ից սկսած 540 օրվա ընթացքում/540 օրը հանդիսանում է գործարքների բողոքարկման առավելագույն ժամկետը, իսկ 02.11.2008թ.-ը՝ վերջին գործարքի իրականացման օրն է/ դատարանին միջնորդեց հնարավոր վնասի՝ 41.269.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնել դեպոնացված 42.269.000 ՀՀ դրամ գումարի վրա՝ 540 օր ժամկետով՝ սկսած 02.11.2008թ.-ից:

-Գործով վկա «Սկավա» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Հասմիկ Դերենիկի Սաղաթեյանի դատաքննության ընթացքում պնդած նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Վարդան Ավետիսյանը կահույքի վաճառքն իրականացրել է Երևան քաղաքի Սասունցի Դավիթ 13 հասցեում տեղակայված վաճառատարահից, ուր ըստ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի տեղադրվել է բանկային քարտեր ունեցող գնորդներին սպասարկելու համար նախատեսված POS-տերմինալը: 2008թ. սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 13-ին POS-տերմինալի միջոցով կատարված գործարքները իրականում ապրանքի վաճառք չեն հանդիսացել: Համաձայն 19.09.2008թ. կնքված պայմանագրի, Վարդան Ավետիսյանը, իմանալով, որ ձեռնարկությանը անհրաժեշտ են եղել դրամական միջոցներ, որպես ֆիզիկական անձ «Սկավա» ՍՊ ընկերությանը փոխառությամբ տրամադրել է 12.367.000 դրամ և այդ գումարը սեփական բանկային քարտից ձեռնարկությանը

հատկացված POS-տերմինալի միջոցով փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «Սկավա» ՍՊԸ-ի հաշվարկային հաշվին: Տնօրենը իրեն նախօրոք զգուշացրել է, որ փոխառության կարգով գումար է մուտքագրել ձեռնարկության հաշվարկային հաշվին: 2008 թվականի սեպտեմբերի 22-ին զանգահարել է «Ինեկոբանկ» ՓԲԸ և իմացել, որ 12.367.000 դրամը մուտքագրվել է «Սկավա» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Տնօրենը ձեռնարկությունում կնքել է փոխառության պայմանագիր, միասին գնացել են «Ինեկոբանկ» և այդ 12.367.000 դրամից սեպտեմբերի 22-ին և 23-ին գումարներ են փոխանցել տարբեր ընկերություններին ապրանքների ձեռքբերման և տեղափոխման համար, ինչպես նաև Ռուդիկ Ղազարյանին՝ Չերմանիա և հարկային տեսչությանը: Մնացած 6 մլն դրամը տնօրենի ցուցումով կանխիկացվել և մուտքագրվել է ընկերության դրամարկղ:

Վկան ցուցմունք էր տվել նաև, որ 2008 թվականի հոկտեմբերի 10-ին Վարդան Ավետիսյանի և «Սկավա» ՍՊԸ-ի միջև կնքվել է նոր փոխառության պայմանագիր 5.000.000 դրամի չափով, ձևակերպումներ կատարելուց հետո այդ գումարը մուտքագրել է դրամարկղ: Տնօրենի հանձնարարությամբ Ղուբայից ապրանքներ ձեռք բերելու համար դրամարկղից ելքագրել է 10.973.109 ՀՀ դրամ, որը «Զարգացման» հայկական բանկ ՓԲԸ-ում բացված հաշվեհամարից փոխանցել է Ղուբայ: Այսինքն, այդ օրը փոխառության կարգով բերված 5 միլիոն դրամը ամբողջությամբ փոխանցել են Ղուբայ, մնացած գումարը գոյացել է նախորդ 12.367.000 դրամ փոխառության գումարից:

2008 թվականի հոկտեմբերի 13-ին Վարդան Ավետիսյանի և «Սկավա» ՍՊԸ միջև կնքվել է նոր փոխառության պայմանագիր 15.598.500 դրամի չափով, որից 230.000 ՀՀ դրամը դարձյալ տնօրենի ցուցումով նույն օրը մուտքագրել է ընկերության դրամարկղ՝ աշխատավարձ վճարելու նպատակով, մնացած գումարը նախատեսված է եղել Ղուբայ փոխանցելու համար՝ ապրանք ձեռք բերելու համար: Միասին հոկտեմբերի 13-ին գնացել են «Զարգացման հայկական բանկ», կանխիկ 15.368.500 դրամը մուտքագրել են «Սկավա» ՍՊԸ հաշվարկային հաշվին և փոխանցել են Ղուբայ: Այսինքն, այդ փոխառության պայմանագրի գումարը ամբողջությամբ ծախսվել է:

Նույն օրը Վարդան Ավետիսյանն իրեն ասել է, որ ձեռնարկության վաճառատարահում տեղադրված POS-տերմինալից սեփական բանկային քարտով փոխառության կարգով գումար է փոխանցելու «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Սկավա» ՍՊԸ հաշվեհամարին: Հոկտեմբերի 15-ին զանգահարել է բանկ և իմացել է, որ գումարը մուտքագրվել է հաշվեհամարին: Վարդան Ավետիսյանը կազմել է փոխառության պայմանագիր նրա և «Սկավա» ՍՊԸ ընկերության միջև 14.780.000 ՀՀ դրամի չափով, որից հաջորդ օրը գումարներ է փոխանցել տարբեր ընկերություններին՝ նյութեր ձեռք բերելու համար, մի մասը փոխանցել է որպես էլեկտրաէներգիայի և գույքահարկի վճարում, իսկ մյուս մասն էլ հոկտեմբերի 16-ին և 17-ին կանխիկացվել և մուտքագրվել է ընկերության դրամարկղ: Դրամարկղում եղած գումարից վճարվել է նաև ընթացիկ ծախսերի դիմաց, իսկ 2.139.231 դրամը մուծել է «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ին՝ վարկի տոկոսի մարման և Ղուբայ փոխանցելու համար:

2008 թվականի հոկտեմբերի 30-ին տնօրենի ցուցումով 5.000.000 դրամը ելքագրել է դրամարկղից և վճարել է վերջինիս 2008 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված փոխառության պայմանագրի մարման նպատակով: Դրամարկղի մնացորդ 5.000.000 դրամն էլ վճարել է Վարդան Ավետիսյանին, վերջինիս ցուցումով, 2008 թվականի նոյեմբերի 1-ին, որպես փոխառության պայմանագրի մասնակի վճարում:

Վերլուծելով հաշվապահական փաստաթղթերը, եկել է այն եզրահանգման, որ 30.10.2008թ. և 01.10.2008թ. Վարդան Ավետիսյանին վճարված ընդհանուր 10.000.000 դրամը գոյացել է

POS-տերմինալի միջոցով 13.10.2008թ. փոխանցված 14.780.000 դրամ գումարից:

Ըստ կարգի, տնօրենը բանկային քարտից փոխառության կարգով «Սկավա» ՍՊԸ-ի հաշվեհամարին գումար փոխանցելու մասին POS-տերմինալի կտրոնները պարտավոր է եղել փոխանցել հաշվապահություն, քանի որ խիստ հաշվառման փաստաթղթեր են: Ինքն այդ մասին մի քանի անգամ հիշեցրել է Վարդան Ավետիսյանին, վերջինս խոստացել է կտրոնները բերել, սակայն խոստումը չի կատարել:

2008թ. նոյեմբերի 2-ին ձեռնարկության վաճառարահում տեղադրված POS-տերմինալի միջոցով գործարքի վերաբերյալ տեղեկություններ չի ստացել: «Սկավա» ՍՊԸ-ի վաճառարահին 2008 թվականի նոյեմբերի 2-ին և դրանից հետո որևիցե ապրանք չի մատակարարել և այդ կապակցությամբ ոչ մի հաշվապահական փաստաթղթեր չեն ներկայացրել, քանի որ գործարքը կատարվել է կիրակի օրը և ինքը բացակայել է քաղաքից: Կիրակի օրը Վարդան Ավետիսյանը զանգահարել է իրեն ու ասել, որ ինչ-որ գործարք է ձևակերպել և խնդրել է հաջորդ օրը գալ աշխատանքի այդ կապակցությամբ փաստաթղթեր լրացնելու համար:

Մանրամասներով չի հետաքրքրվել, իսկ երկուշաբթի հիվանդության պատճառով չի ներկայացել աշխատանքի: Երկուշաբթի՝ 2008 թվականի նոյեմբերի 4-ին եկել է աշխատանքի, սակայն տնօրենին այդպես էլ չի տեսել:

-Գործով վկա Վիդեա Միերի Սիմոնյանի դատաքննության ընթացքում պնդած նախաքննական ցուցմունքով առ այն, որ 2008 թվականի հոկտեմբերի 1-ից Երևանի Սասունցի Դավիթ 13 հասցեում գտնվող «Սկավա» ՍՊԸ-ի վաճառարահում աշխատում է որպես խորհրդատու, որի տնօրենն է հանդիսացել Վարդան Ավետիսյանը: Իր ներկայությամբ տնօրենը վաճառարահից երբեք ապրանքի վաճառքով չի զբաղվել, գրեթե միշտ գտնվել է Վարդաշեն թաղամասում գտնվող «Սկավա» ՍՊԸ վարչական շենքում և արտադրամասում: Վաճառարահից ապրանքի վաճառքով զբաղվել է մենեջերը՝ Վահագն Հովհաննիսյանը, որը միաժամանակ կատարել է նաև գանձապահի պարտականությունները: Իր պարտականությունների մեջ է մտել հաճախորդներին ներկայացնելը: Վաճառարահում փաստացի աշխատել են ինքը և Վահագն Հովհաննիսյանը՝ ժամը 10-ից մինչև 19-ը ընկած ժամանակահատվածում, վերջինս աշխատանքային օրվա ավարտից հետո միշտ փակել է խանութը բանալիներով: Կիրակի օրերին վաճառարահը չի գործել:

Վաճառարահում «Ինեկորբանկ» ՓԲԸ-ի կողմից տեղադրվել է բանկային քարտերի սպասարկման համար նախատեսված POS-տերմինալ, իր աշխատելու ժամանակահատվածում այդ սարքով միայն մեկ անգամ է կատարվել կահույքի վաճառք՝ 490.000 դրամի չափով:

2008 թվականի նոյեմբերի 2-ին՝ կիրակի օրը, ինքը վաճառարահում չի եղել իսկ հաջորդ օրը աշխատավայրում ապրանքատեսականու փոփոխություն չի եղել:

- «Սկավա» ՍՊԸ կահույքի սրահի մենեջեր և գանձապահ Վահագն Հովհաննիսյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ վաճառարահում ծայնային անվտանգության համակարգի բացակայության պատճառով, ներքին հանգստության համար կիրակի օրերին պարբերաբար այցելել է աշխատավայր, այդ թվում նաև 2008 թվականի նոյեմբերի 2-ին, վաճառարահում գտնվել է մոտավորապես ժամը 12-ից մինչև 14-ն ընկած ժամանակահատվածում, բացի իրենից այնտեղ ոչ ոք չի եղել:

Հաջորդ օրը առավոտյան մոտ 930-ին, գալով աշխատավայր շաբաթ օրվա դրությամբ առկա ապրանքատեսականու հետ տարբերություն չի նկատել: Եթե վաճառարահից վաճառվել 15 միլիոն արժողությամբ կահույք, ապա դրա մի մասը կդատարկվել և դա նկատելի կլիներ:

-Իրեղեն ապացույց ճանաչված պայմանագրերով, վճարային

հանձնարարագրերով, արտարժույթի փոխանակման հայտով, դրամարկղային չեկերով ու մուտքի, ելքի օրդերներով, կանխիկ մուտքի անդորրագրով, POS-տերմինալի առևտրային չեկերով, Ջեֆրի Պարկերի տվյալներով և տղամարդու լուսանկարով անձնագրի 2-3րդ էջերից և բանկային քարտի պատճեններով:

- Ապացույց ճանաչված այլ փաստաթղթերով ընկերության հաշվեհամարի շարժի վերաբերյալ փաստաթղթերով, Վ.Ավետիսյանի 04.11.2008թ. բացատրությամբ, 04.09.2008թ. պայմանագրով, «Արմենիան քարո» ՓԲԸ-ի 11.11.2008թ. թիվ 166/08, 17.11.2008թ. թիվ 173/08 գրություններով, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված 25/01-50447 գրությամբ, ՀՀ ԱԱԾ-ից ստացված 18.12.2008թ., 25.11.2008 և 27.01.2009թ. գրություններով:

-ՀՀ Գիտությունների ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների 04.02.2009թ. թիվ 08-1502 եզրակացությամբ այն մասին, որ 18.09.2008թ., 13.10.2008թ. և 02.11.2008թ. գործարքները փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ են ստացել, ելնելով ոչ թե դրանց տնտեսական բովանդակությունից ու տնտեսավարման պայմաններից, այլ միայն դրանց իրավական ձևից: Նման կարգի հաշվառումն ըստ էության նպատակաուղղված է եղել «Սկավա» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Ավետիսյանի կողմից սեփական ձեռնարկության վաճառարահույժ տեղադրված բանկային քարտերի սպասարկման POS-տերմինալի միջոցով բանկի հաճախորդների հաշվեհամարներից խոշոր չափերի գումարների գողացման փաստի քողարկման, այսինքն, անօրինական ճանապարհով ստացված եկամտի իրական բնույթի և ծագման աղբյուրի խեղաթյուրման միջոցով ընդհանուր առմամբ 42.269.000 դրամ գումարի եկամտի օրինականացմանը:

Հաշվապահական հաշվառման դրույթների և նախաքննությամբ ձեռք բերված տվյալների տեսանկյունից, վերոհիշյալ գործարքներն, ըստ էության, բովանդակային առումով արժանահավատ են: Այդ գործարքների հետևանքով, «Սկավա» ՍՊԸ-ի կողմից 42.269.000 ՀՀ դրամի վնաս է պատճառվել բանկի հաճախորդներին, իսկ անուղղակի կերպով «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին:

Բացի այդ, «Սկավա» ընկերությունը չի պահպանել 18.09.2008թ. և 13.10.2008թ. գործարքների առևտրային չեկերի պատճենները, որով և խախտել է 04.09.2008թ. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի հետ «Առևտրի և սպասարկման սրահներում բանկային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու վերաբերյալ» կնքված պայմանագրի 2.4.11 կետի օահանջները:

-«ՀՀ Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 05.02.2009թ. թիվ 48930801 եզրակացությամբ այն մասին, որ Վ. Ավետիսյանի կողմից որպես վաճառքի իրականացման ապացույց վարույթն իրականացնող մարմնին ներկայացված և փորձաքննությանը տրամադրված Ջեֆրի Պարկերի անվամբ լրացված 100553097 սերիական համարով ԱՄՆ քաղաքացու անձնագրի պատճենները չեն պատճենահանվել անմիջապես ԱՄՆ քաղաքացու անձնագրից: Անձնագրի պատճենները չեն համապատասխանում ԱՄՆ պետատանդարտին համապատասխանող անձնագրի չափանիշներին և պատրաստվել են թվային մոնտաժման եղանակով:

Դատարանի իրավական վերլուծությունը.

Գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը հաստատված համարեց, որ ամբաստանյա Վարդան Ավետիսյանը հանդիսանալով «Սկավա» ՍՊԸ տնօրեն, քննությամբ դեռևս չպարզված անձից ձեռք է բերել ԱՄՆ-ում գործող «MBNA AMERICA BANC» կազմակերպության կողմից բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և սեփական ձեռնարկության վաճառարահույժ տեղադրված բանկային քարտերի սպասարկման POS-տերմինալի միջոցով նշված բանկի հաճախորդների հաշվեհամարներից գաղտնի հափշտակել է ընդհանուր առմամբ



42,269,000 դրամ առանձնապես խոշոր չափի գումար: Բացի այդ, ամբ. Վարդան Ավետիսյանը հիշյալ հափշտակած գումարները «Սկավա» ՍՊԸ-ի հաշվեհամարին փոխանցելով և տնօրինելով, գումարի իրական բնույթը և ծագման աղբյուրը խեղաթյուրելու եղանակով հանցավոր ճանապարհով օրինականացրել է ստացված եկամուտը, այսինքն կատարել է հանցավոր արարքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որոնք որակված են ճիշտ, և նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի այդ հոդվածներով: Ամբաստանյալ Վարդան Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի առավ կատարած արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը: Պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ չկան: Որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի առավ այն, որ ամբաստանյալն իրեն լիովին մեղավոր ճանաչեց, գործուն գղջաց կատարածի համար, ակտիվ միջոցներ է ձեռնարկել պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ, 42.269.000 ՀՀ դրամի չափով հափշտակված գումարն ամբողջությամբ վերականգնել է, նախկինում դատապարտված ու արատավորված չի եղել, ամուսնացած է, խնամքին ունի երեք անչափահաս երեխա, ընտանիքի միակ կերակրողն է, բնութագրվում է դրականորեն:

Դատարանը հաշվի առնելով գործի հանգամանքները, ամբաստանյալի անձը բնութագրող վերը շարադրված տվյալները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ 42.269.000 ՀՀ դրամ հափշտակած գումարն ամբողջությամբ կանոնված վերականգնել է ու հատուցել է պատճառված վնասը, հանգեց այն հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է նշանակված պատիժը պայմանականորեն չլիրառելով՝ սահմանելով փորձաշրջան:

Քննության առնելով գործով տուժող «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արման Մնացականյանի կողմից 1.000.000 ՀՀ դրամի չափով ներկայացրած քաղաքացիական հայցի պահանջը, դատարանը գտավ, որ այն պետք է բավարարել ամբողջությամբ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում գտնվող սառեցված 15.000.000 ՀՀ դրամից: Ամբաստանյալ Վարդան Ավետիսյանի կողմից կանխիկ ձևով վերականգնած ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունում, կալանքի տակ գտնվող 27.100.000 ՀՀ դրամ գումարը, ինչպես նաև «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում սառեցված 14.000.000 ՀՀ դրամը, ընդամենը 41.269.000 ՀՀ դրամի չափով, բռնագանձել հոգուտ պետական բյուջեի, որպես հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումար՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով: Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-375 հոդվածներով դատարանը.

Վ Ը Ռ Ե 8

Վարդան Տիգրանի Ավետիսյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրան դատապարտել ազատազրկման ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 5/հինգ/ տարի ժամկետով առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 7/յոթ/ տարի ժամկետով առանց գույքի բռնագրավման :

Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 4-րդ մասը, նշանակված պատիժները մասնակի գումարելով վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 8/ութ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նշանակված պատիժն հաշվակցելով նախնական կալանքի տակ գտնված 1/մեկ/ ամիս 22/քսաներկու/ օրը, վերջնական պատիժ նշանակել 7/յոթ/ տարի 10/տաս/ ամիս 8/ութ/ օր՝ առանց գույքի

	<p>բռնագրավման:          Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածը՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանել փորձաշրջան 4/չորս/ տարի ժամկետով, որի կատարումը դնել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:          Խախտման միջոցը թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:          Գործով տուժողի ներկայացուցիչ Արման Մնացականյանի քաղաքացիական հայցի պահանջը 1.000.000 ՀՀ դրամի չափով, բավարարել, այն բռնագանձել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում կալանքի տակ գտնվող 15.000.000 ՀՀ դրամ գումարից :          «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունում կալանքի տակ գտնվող համապատասխանաբար, 14.000.000 ՀՀ դրամը և 27.269.000 ՀՀ դրամ գումարը բռնագանձել հոգուտ պետական բյուջեի՝ որպես հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումար:          Գործով իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը թողնել քրեական գործում:          Դատավճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ Ժ. ՎԱՐԴԱՆՅԱՆ</p>
<p><b>Ամսաթիվ:</b></p>	<p>06-05-2009</p>
<p><b>Գործը հանձնվել է գրասենյակ:</b></p> <p><b>Էջերի քանակ:</b></p> <p><b>Գործին կից նյութերը:</b></p> <p><b>Գործն ուղարկվել է:</b></p> <p><b>Ուր:</b></p> <p><b>Գրության համարը:</b></p> <p><b>Գործը ստացվել է:</b></p> <p><b>Ներկայացվել է դիմում միջնորդություն:</b></p>	<p>08-05-2009</p> <p>205, 287</p> <p></p> <p></p> <p></p> <p></p> <p></p> <p></p> <p></p>
<p><b>Ամսաթվիվ:</b></p> <p><b>Էջերի քանակը:</b></p> <p><b>Գործին կից նյութերը:</b></p> <p><b>Այլ նշումներ:</b></p>	<p>13-12-2010</p> <p>2 հ.</p> <p></p> <p></p>